Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ
Խ-298-26.09.2019-ՏՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ
ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 04-ի հարկային օրենսգրքի 147-րդ ~~հոդվածը~~ հոդվածի 1-ին ~~մասի~~ մասը լրացնել նոր 4.1-~~րդ~~ ին ~~կետը~~ կետով.

«4.1. բանկերի կամ վարկային կազմակերպությունների միջոցով ստացված գումարները, որոնք բանկերը կամ վարկային կազմակերպություններն ստացել են որպես ապահովագրական հատուցում, որոնց մասով բանկը կամ վարկային կազմակերպությունը հանդիսանում է շահառու, իսկ ֆիզիկական անձը՝ ապահովադիր (այդ թվում, եթե գումարները բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից անմիջապես ուղղվում են ֆիզիկական անձի վարկի մարմանը, որի մասով առկա է ապահովագրության պայմանագիր) ~~ապահովագրական հատուցումները» բառերից հետո լրացնել «(այդ թվում՝ եթե ֆիզիկական անձը հանդիսանում է ապահովադիր և հատուցման գումարն ստանում է ապահովագրության շահառու հանդիսացող բանկի կամ վարկային կազմակերպության կողմից).~~.» ~~բառերով~~:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: